

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 11-ի N 727-Ա որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 458-Լ որոշման 26-րդ կետի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2022 թվականի օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

3. Հաշվետվությունը ներկայացվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի կառավարման ոլորտում իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների ամփոփում: Միաժամանակ, ծրագրով պետական մասնակցությամբ ընկերությունների մասնավորեցման և անշարժ գույքի օտարման գործարքներից դրամական մուտքերի կանխատեսումներ նախատեսված չեն, ուստի ծրագրի 2021-2022 թվականների ընթացքում մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման արդյունքները և դրամական մուտքերը գնահատելու համար կից ներկայացվում է գններացված եկամտային հոսքերի վերաբերյալ 2021-2022 թվականների դրամական մուտքերի համեմատականը.

Ընկերությունների (գույքի) մասնավորեցման ձևը	2021-2022 թթ. մասնավորեցվել են	2021 թ. մասնավորեցվել են	2022 թ. մասնավորեցվել են
Ուղղակի վաճառք	2	1	1
Աճուրդ	4	2	2
<i>Ընդամենը</i>	6	3	3
Անշարժ գույքի օտարում	2021-2022 թթ. օտարվել են	2021 թ. օտարվել են	2022 թ. օտարվել են
	26	9	17

Մասնավորեցումից ստացված դրամական մուտքերը, որից	Մասնավորե- ցումից ստացված միջոցներ 2021 թ. ընթացքում (հազ. դրամ)	Մասնավորե- ցումից ստացված միջոցներ 2022 թ. ընթացքում (հազ. դրամ)	Մասնավորեցումից ստացված միջոցների 2022 թ.-ի աճը 2021 թ.-ի նկատմամբ %
Ընդամենը, այդ թվում՝	407,547.38	845,281.16	207.41
ՀՀ բյուջեի հաշվին փաստացի մուտքագրվել է	294,565.85	607,020.09	206.07
համայնքներին է փոխանցվել	112,981.53	238,261.07	210.88

Պետական անշարժ գույքի օտարումից մուտքերը	Օտարումից ստացված միջոցներ 2021 թ. ընթացքում (հազ. դրամ)	Օտարումից ստացված միջոցներ 2022 թ. ընթացքում (հազ. դրամ)	Օտարումից ստացված միջոցների 2022 թ.-ի աճը 2021 թ.-ի նկատմամբ %
Ընդամենը, պետական անշարժ գույքի օտարումից այդ թվում՝	884,181.59	3,291,977.4	372.32
ՀՀ բյուջեի հաշվին փաստացի մուտքագրվել է	678,629.4	2,438,993.7	359.40
համայնքներին է փոխանցվել	205,552.2	852,983.7	414.97
	Վարձակալու- թյունից	Վարձակալու- թյունից	Վարձակալությունից ստացված

Պետական գույքի վարձակալությունից մուտքեր	ստացված միջոցներ 2021 թ. ընթացքում (հազ. դրամ)	ստացված միջոցներ 2022 թ. ընթացքում (հազ. դրամ)	միջոցների 2022 թ.-ի աճը 2021 թ.-ի նկատմամբ %
Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից մուտքեր	Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից մուտքեր՝ 2021 թ. ընթացքում (հազ. դրամ)	Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից մուտքեր՝ 2022 թ. ընթացքում (հազ. դրամ)	Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարից մուտքեր՝ 2022 թ.-ի աճը 2021 թ.-ի նկատմամբ %
ընդամենը, այդ թվում՝	272,045.6	318,577.0	117.10
պետական բյուջե	81,388.5	78,923.3	96.97
ՊՈԱԿ-ներ	190,657.1	239,653.7	125.7
Պետական սեփականություն համարվող հողերի կադաստրային արժեքի վճարումից մուտքեր	293,007.6	4,014.603.6	1370.14
Ընդամենը մուտքեր,	Ընդամենը մուտքեր՝ 2021 թ. ընթացքում (հազ. դրամ)	Ընդամենը մուտքեր՝ 2022 թ. ընթացքում (հազ. դրամ)	Ընդամենը մուտքեր՝ 2022 թ.-ի աճը 2021 թ.-ի նկատմամբ (%)
ընդամենը, այդ թվում՝	2,175,587.3	8,940,727.9	410.96
պետական բյուջեի մուտքեր	1,666,396.5	7,609,829.4	456.66
համայնքային բյուջե	318,533.7	1,091,244.8	342.58
ՊՈԱԿ-ներ	190,657.1	239,653.7	125.70

4. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը: Ծրագրով նախատեսված պետական գույքի կառավարման բարեփոխման աշխատանքները բոլորը կատարվել են, բացառությամբ ծրագրով 2021-2023 թվականների համար նախատեսված՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կազմն օպտիմալացնելու կառավարման համակարգի կատարելագործման միջոցառման, որը դեռևս չի իրականացվել, և որի համար ժամկետ է սահմանված մինչև ծրագրի ավարտը:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. 2022 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից (այսուհետ՝ կոմիտե) պետական գույքի կառավարման առանձին բնագավառներում իրականացվել են պետական գույքի կառավարման բարեփոխման աշխատանքներ, մասնավորապես, կոմիտեի կողմից 2022 թվականին մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

1) **Նպատակ՝** ծրագրի 3-րդ կետով և «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2022 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-282-Ն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ծրագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն ՀՀ կառավարության, պետական մարմինների ղեկավարների, մարզպետների կողմից պետական գույքի և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կտրվածքով սահմանված միջոցառումներում քանակական ցուցանիշների էական փոփոխություն կատարելու և ծրագրում նոր միջոցառումների ընդգրկման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու դեպքում, ինչի հետ կապված **իրականացվել է հետևյալ միջոցառումը.**

ա. «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2022 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-282-Ն օրենքը, որով 2017 թվականի հունիսի 9-ի «Պետական գույքի մասնավորեցման

2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՕ-95-Ն օրենքի 1-ին հավելվածի ցանկը համալրվել է «Արմենիկում» (ծածկագիր՝ 90125) և «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» (ծածկագիր՝ 90126) փակ բաժնետիրական ընկերություններով: Նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 41-Ա որոշման պահանջների կատարմամբ, համաձայն որի «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» և «Արմենիկում» փակ բաժնետիրական ընկերությունների՝ 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ հետագայում օտարելու նպատակով.

2) **Նպատակ՝** ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1063-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի կատարման միջոցառումների իրականացում, ինչի կատարման հետ կապված **իրականացվել է հետևյալ միջոցառումը.**

ա. հաստատվել է Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը՝ պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարության ընդունմամբ փոփոխության կենթարկվի ոչ միայն պետական գույքի կառավարման քաղաքականությունը, այլ նաև կրթարձրանա պետական գույքի հաշվառման, մասնավորեցման, օտարման, պետական գույքի օգտագործման, սպասարկման և ծառայությունների մատուցման, պետական գույքի պահպանման և օգտագործման վերահսկման գործընթացների արդյունավետությունը: Բացի այդ, կրթարելավվեն նաև պետական գույքի և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը.

3) **Նպատակ՝ ծրագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված միջոցառման իրականացում,** որով ծրագրի գործողությունը տարածվում է նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին, հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով և վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքի վրա.

ա. նշված **միջոցառման կատարման համար** մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունվել է «Պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառնությունների իրականացման համար պետական սեփականություն հանդիսացող տարածքով ապահովելու կամ դրա բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման կարգը հաստատելու մասին» N 2057-Ն որոշումը, որով կանոնակարգվել է պետական մարմինների և կազմակերպությունների առաջնահերթ գործառնությունների իրականացման համար պետական գույքի օգտագործման տրամադրման կամ դրա բացակայության դեպքում՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման գործընթացը, որը կազմակերպում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն.

4) **Նպատակ՝ ծրագրի N 1 հավելվածի 12-րդ կետի 7-րդ ենթակետով** սահմանված՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից գույքի (անշարժ և շարժական) օգտագործման արդյունավետության պարբերական ուսումնասիրություններ իրականացնելու միջոցառում.

ա. նշված **միջոցառման կատարման համար** ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի սեպտեմբերի 8-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին լիազորություններ վերապահելու և պետական կառավարման համակարգի մարմիններին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին հանձնված պետական սեփականություն համարվող շարժական գույքը հետ վերցնելու և այլ պետական կառավարման համա-

կարգի մարմիններին ամրացնելու ու պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին հանձնելու կարգը հաստատելու մասին» N 1403-Ն որոշումը, որով էականորեն կրարձրացվի պետական սեփականություն համարվող շարժական գույքի շրջանառության ընթացքը, այն կիրականացվի համեմատաբար ավելի կարճ ժամկետում և օպերատիվ ձևով, կկրճատվի ՀՀ կառավարության որոշումների թվաքանակը, արդյունքում կրարձրանան շարժական գույքի օգտագործման արդյունավետությունը և նպատակային կիրառումը, կապահովվեն գործարքի հրապարակայնությունը և հաշվետվողականությունը.

5) **Նպատակ՝** ՀՀ Ազգային ժողովի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-520-Ն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված միջոցառման իրականացում.

ա. նշված **միջոցառման կատարման համար** մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-519-Ն, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-520-Ն և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-525-Ն օրենքները: Փոփոխության արդյունքում՝ կոմիտեն այսուհետ հնարավորություն և լիազորություն կունենա տնօրինելու պետական սեփականություն հանդիսացող հողերը և կայացնել որոշումներ վերջիններիս վերաբերյալ: Նախագծի ընդունումը պայմանավորված է պետական սեփականություն համարվող հողամասերի մասնավորեցման և օտարման բնագավառում լիազորված մարմնի գործառույթների հստակեցման անհրաժեշտությամբ: Արդյունքում, պետական սեփականություն հանդիսացող հողամասերը հնարավոր կլինի օտարել առավել արդյունավետ, հստակ կանոնակարգված ընթացակարգերով: Իրավական ակտերի բարեփոխման գործընթացը կրում է շարունակական բնույթ և 2023 թվականի ընթացքում ևս շարունակվելու է:

II. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

6. Ծրագրի 12-րդ կետով՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից տնօրինվող գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար նախատեսված է հստակեցնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնետնասերով) առևտրային կազմակերպությունների գույքի կազմն ու կառուցվածքը և, միաժամանակ, օպտիմալացնել այդ կազմակերպությունների քանակը, ինչի հետ կապված իրականացվել են հետևյալ միջոցառումները.

7. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 1՝** «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ լուծարման առաջարկվող պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների» ցանկով նշված միջոցառման իրականացում: Իրականացված վերոնշյալ միջոցառում հաշվետու ժամանակահատվածում առկա չէ:

8. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 2՝** «Վերակազմակերպման առաջարկվող՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների» ցանկով նշված միջոցառումների իրականացում: Իրականացված վերոնշյալ միջոցառում հաշվետու ժամանակահատվածում առկա չէ:

9. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 3՝** «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքի» ցանկով նշված միջոցառումների իրականացում: Նշված ցանկով 2022 թվականին **իրականացված միջոցառումների կատարումը** հետևյալն է.

1) ծրագրի N 1 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ կոմիտեի տնօրինությանն է հանձնվել թվով 1 գույք՝ Նիզամիի 53/3-1 հասցեում գտնվող հողամաս՝ ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 6-ի գույքի հանձնման-

ընդունման ակտի համաձայն, իսկ ծրագրի N 2 հավելվածի N 3 ցանկում ներառված անշարժ գույքից՝ 6-րդ, 7-րդ և 10-րդ կետերով նշված թվով 3 գույքերը (ՀՀ Սյունիքի մարզի գ. Արծևանիկի հիվանդանոցի շենքը, ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի Քաջարանի ԲԿ-ի շենքը և «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի նախկին շենքը, Բանակի 8 գ-1) կոմիտեի տնօրինությանը հանձնված չեն՝ իրավունքների պետական գրանցման վկայականի անհամապատասխանության պատճառով.

2) ծրագրի N 1 հավելվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ 2020 թվականի հունիսի 25-ին ամրագրված՝ N 1 հավելվածում ներառված անշարժ գույքից կոմիտեի տնօրինությանն է հանձնվել 89 միավոր անշարժ գույք: Միջգերատեսչական համագործակցության շրջանակներում կոմիտեն շարունակաբար համագործակցում է պետական մարմինների և մարզպետարանների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ՝ համաձայն նշված որոշման N 2 հավելվածում ներառված անշարժ գույքի (որոնք չունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում) պետական գրանցման աշխատանքներն իրականացնելու և գրանցում իրականացնող լիազոր մարմնում՝ Կադաստրի կոմիտեում, գրանցման աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

10. **Նպատակ՝** հաշվետու ժամանակաշրջանում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքով հաստատված N 1 հավելվածի ցանկում՝ այդ թվում **ծրագրի N 2 հավելվածի N 4՝** «Մասնավորեցման ծրագրում ընդգրկված՝ չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման և/կամ լուծարման առաջարկելու ժամկետների» ցանկով նշված միջոցառման իրականացում: **Իրականացվել են հետևյալ միջոցառումները՝** նշված ցանկում ընդգրկված ընկերություններից.

1) **մասնավորեցման են ներկայացվել** հետևյալ ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը.

ա. «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ 100 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 17-ի N 914-Ա որոշմամբ ներկայացվել են մասնավորեցման մրցույթով, սակայն հայտ չլինելու պատճառով մասնավորեցումը չի կայացել: Ընկերության բաժնետոմսերը կրկին ներկայացվել են մասնավորեցման ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1882-Ա որոշմամբ: Մրցույթի անցկացման օր է նշանակվել 2023 թվականի փետրվարի 3-ը,

բ. «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ-ի 100 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը՝ ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 1457-Ա որոշմամբ,

գ. «Գյուլոնդ» ԲԲԸ-ի 30% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի N 444-Ա որոշմամբ,

դ. 55 անվանումով հիմնական միջոցները՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի N 1053-Ա որոշմամբ, որոնք «Էրեբունի բժշկական կենտրոն» առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման մասին ՀՀ կառավարության 2002 թ. հունվարի 14-ի N 31 որոշման համաձայն առանձնացվել են ընկերության գույքի կազմից և ենթակա են մասնավորեցման՝ «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքով սահմանված ձևերով.

2) հաշվետու ժամանակահատվածում **մասնավորեցվել են** հետևյալ 2 ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը և մասնավորեցման ենթակա 55 անվանումով հիմնական միջոցները (գույք).

ա. ուղղակի վաճառքի ձևով՝ «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ-ի 100% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը,

բ. դասական աճուրդով՝ «Գյուլոնդ» ԲԲԸ-ի 30% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը և 55 անվանումով հիմնական միջոցները.

3) «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի տնօրինման լիազորությունը ՀՀ կառավարության 2022 թվականի

հունվարի 27-ի N 72-Ա որոշմամբ **վերապահվել են** ՀՀ առողջապահության նախարարությանը:

11. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 5՝** «Մասնավորեցման ծրագրում ընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց» ցանկով նշված միջոցառման իրականացում: **Նշված միջոցառման իրականացման նպատակով՝** հաշվետու ժամանակաշրջանում **օտարման է** ներկայացվել 53 միավոր (այդ թվում՝ **ծրագրի N 2 հավելվածի N 5 ցանկում ընդգրկված**) անշարժ գույք, որոնցից օտարվել է 17 միավոր անշարժ գույք, այդ թվում՝ **ծրագրի N 2 հավելվածի N 5 ցանկում ընդգրկված** 2 միավոր անշարժ գույքը.

1) **ծրագրի N 2 հավելվածի N 5 ցանկում ներառված** գույքը (բացառությամբ 2 գույքերի՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Արզնի խճուղի հասցեի՝ նախկին մանրէների անվանադրման կենտրոնի և ք. Երևան, Նորք Մարաշ, Նորքի այգիներ 180 հասցեի շենք-շինությունների, որոնք հաշվետու ժամանակահատվածում օտարվել են) մինչև 2022 թվականը բազմիցս ներկայացվել է օտարման սակարկություններով և չի օտարվել՝ մասնակիցներ չլինելու պատճառով և, հաշվի առնելով դրանց գրավչություն չունենալու հանգամանքը, կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրվել է հայտարարություն դրանց օտարման ենթակա լինելու վերաբերյալ, և նախատեսվում է դիմումների առկայության դեպքում՝ ներկայացնել օտարման.

2) **ծրագրի N 1 հավելվածի 18-րդ և 20-րդ կետերով սահմանված** անշարժ գույքի օտարման վերաբերյալ միջոցառումների կատարողականի մասին տեղեկատվությունը ներկայացված է N 1 և N 2 ցանկերով:

12. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 6՝** «Պետական գույքի վարձակալությունից սպասվելիք մուտքերի վերաբերյալ» ցանկով նշված միջոցառման իրականացում: 2022 թվականին պետական բյուջե ծրագրով կանխատեսվող (սպասվելիք) դրամական մուտքերը սահմանվել են՝ 158,000.0 հազար հայկական դրամ, մինչդեռ ցանկով նշված **միջոցառման իրականացման նպատակով՝** 2022 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 470,288.7 հազար հայկական դրամ: Այլ կերպ, կատարողականը կազմել է 298%: ՀՀ ֆինանսների նախարարության գրությամբ

նշված ցուցանիշը կազմել է 456,590.8 հազ. դրամի մուտք: Տարբերությունը պայմանավորված է նախորդ ժամանակահատվածում տվյալ հաշվին մուտքագրված և 2022 թվականի ընթացքում հետ վերադարձված գումարներով: Մասնավորապես, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի 13,344.0 հազ. դրամի 03.06.2022 թ.-ի հետվերադարձ, «Հայաստանի Կիոկուշին կարատեի ֆեդերացիա» ՀԿ-ի 38.0 հազ. դրամի 15.07.2022 թ.-ի հետ վերադարձ, «Դիագնոստիկա բժշկական միավորում» ԲԲԸ-ի 316.0 հազ. դրամի 16.08.2022 թ.-ի հետվերադարձ:

13. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 7՝** «Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների (այսուհետ՝ ալեհավաք) տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք (կանխատեսվող) մուտքերի վերաբերյալ» ցանկով նախատեսված միջոցառման իրականացում: Ծրագրով 2022 թվականի համար կանխատեսվող դրամական մուտքերը սահմանվել են 271,000.0 հազար հայկական դրամ, որից պետական բյուջե սպասվելիք դրամական մուտքերը՝ 76,000.0 հազար հայկական դրամ, մինչդեռ, **միջոցառման իրականացման նպատակով՝** նշած ցանկով ալեհավաքների տեղակայման և սպասարկման ծառայություններից վարձավճարները 2022 թվականին կազմել են 318,577.0 հազար հայկական դրամ, որից պետական բյուջե փոխանցվել է 78,923.3 հազար հայկական դրամ: Այլ կերպ, կատարողականը կազմել է համապատասխանաբար՝ 118 % և 104 %:

14. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 8՝** «Մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրատուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում ստանձնած ներդրումային պարտավորությունները» ցանկով նշված միջոցառման իրականացում: Նշված **միջոցառման իրականացման նպատակի՝** ցանկում ընդգրկված, գնորդների կողմից պայմանագրերով ստանձնված պարտավորությունների, կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է N 3 ցանկով:

15. **Նպատակ՝ ծրագրի N 2 հավելվածի N 8՝** իրականացնել հսկողություն N 8 ցանկում ընդգրկված՝ «Մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրատուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում ստանձնված ներդրումային պարտավորությունների» ցանկով նախատեսված միջոցառման իրականացում: Նշված **միջոցառման իրականացման նպատակով** հաշվետու ժամանակահատվածում՝ 2 գնորդների կողմից կնքվել և 2022 թվականին ստանձնվել են հետևյալ ներդրումային պարտավորությունները՝

1) վարձակալության պայմանագրով 1 վարձակալ ստանձնել է 5 000 000 հայկական դրամի ներդրումային պարտավորություն, որի վերաբերյալ ներկայացվել են փաստաթղթեր՝ գտնվում է ուսումնասիրության փուլում:

2) օտարման պայմանագրով 1 գնորդ ստանձնել է 1 400 000 000 հայկական դրամի ներդրումային պարտավորություն, որի վերաբերյալ ներկայացվել են փաստաթղթեր՝ գտնվում է ուսումնասիրության փուլում:

16. **Նպատակ՝ ծրագրի N 3 հավելվածի** ցանկում ընդգրկված կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերլուծության հետ կապված՝ ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում: Նշված ցանկի **միջոցառման կատարման** մասով՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ հաստատված (հավելված N 1) կարգի համաձայն իրականացվել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություններ՝ կիսամյակային և տարեկան կտրվածքով: Վերլուծության արդյունքներն ամփոփ տեղեկանքների տեսքով ներկայացվել են ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն: Նույն որոշման N 4 հավելվածի կարգի համաձայն

2022 թվականին իրականացվել է կազմակերպությունների գործունեության արդյունավետության որոշում, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքի գնահատում այն կազմակերպությունների համար, որոնց մոտ հաշվետու տարվա վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցել է մեկ միլիարդ դրամը (բացառությամբ այն ակտիվների, որոնք չեն օգտագործվում կազմակերպության կողմից) և, կամ հաշվետու տարվա գործունեությունից հասույթը գերազանցել է մեկ միլիարդ դրամը: Արդյունքում, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել կազմակերպությունների կառավարումն իրականացնող լիազոր մարմիններ, իսկ ամփոփ տեղեկանքը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ.

2) 2021 թվականի տարեկան տվյալների հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

ա. վերլուծության ենթարկված 134 ընկերություններից 99-ը (73,88%) աշխատել է շահույթով, 30 ընկերություն (22,38%) աշխատել է վնասով, իսկ 5 ընկերություն (3,74%) շահույթ (վնաս) չի ձևավորել,

բ. ընկերությունների 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքում ձևավորվել է 8, 810,662.0 հազար հայկական դրամի վնաս, որում զգալի մաս է կազմում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ընկերությունների՝ 1,237,601.1 հազար հայկական դրամ, ՀՀ վարչապետի աշխատակազմի ընկերությունների՝ 699,480.0 հազար հայկական դրամ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընկերությունների՝ 5,199,054.2 հազար հայկական դրամ, Ջրային կոմիտեի ընկերությունների՝ 641,981.0 հազար հայկական դրամ կողմից ձևավորած վնասը,

գ. 2021 թվականի տարեկան տվյալներով ընկերությունների զուտ շահույթի ընդհանուր ծավալը կազմել է 34,862,448.5 հազար հայկական դրամ, որտեղ գերակշիռ մաս են կազմում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընկերությունների՝ 30,894,271.9 հազար հայկական դրամ, ՀՀ հանրային հեռարձակողի խորհրդի ընկերությունների՝ 541,936.0 հազար հայկական դրամ, ՀՀ առողջապահության նախարարության ընկերությունների՝ 584,359.4 հազար

հայկական դրամ, քաղաքացիական ավիացիայի ընկերությունների՝ 454,354.0 հազար հայկական դրամ, կողմից ձևավորած գուտ շահույթը,

դ. 2021 թվականի տարեկան արդյունքներով ընկերությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 179,306,769.8 հազար հայկական դրամ,

ե. աշխատակիցների թիվը կազմել է 28 494 մարդ,

զ. վերլուծության արդյունքներն ամփոփ տեղեկանքների տեսքով ներկայացվել են ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն.

3) 2022 թվականի առաջին կիսամյակի հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

ա. վերլուծության ենթարկված 127 ընկերությունների 73-ը (54,48%) աշխատել է շահույթով, 51 ընկերություն (40,15%) աշխատել է վնասով, իսկ 3 ընկերություն (2,36%) շահույթ (վնաս) չի ձևավորել,

բ. ընկերությունների 2022 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքում ձևավորվել է **2,203,135.8 հազար հայկական դրամ** վնաս, որում զգալի մասը բաժին է ընկնում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ընկերություններին՝ **1,034,152.2 հազար հայկական դրամ**, ՀՀ առողջապահության նախարարության ընկերություններին՝ **337,749.3 հազար հայկական դրամ**, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընկերություններին՝ **252,884.4 հազար հայկական դրամ**,

գ. 2022 թվականի առաջին կիսամյակի տվյալներով ընկերությունների գուտ շահույթի ընդհանուր ծավալը կազմել է **59,308,214.4 հազար հայկական դրամ**, որում զգալի մասը բաժին է ընկնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընկերություններին՝ **56,928,536.1 հազար հայկական դրամ**, ՀՀ առողջապահության նախարարության ընկերություններին՝ **444,151.3 հազար հայկական դրամ**, Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին՝ **1,181,847.6 հազար հայկական դրամ**,

դ. 2022 թվականի առաջին կիսամյակի տարեկան արդյունքներով ընկերությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 92,133,511.8 հազար հայկական դրամ,

ե. աշխատակիցների թիվը կազմել է 25 582 մարդ: Հարկ է նշել, որ ճիշտ պատկեր հնարավոր է ունենալ տարեկան տվյալների ամփոփման ժամանակ,

զ. վերլուծության արդյունքներն ամփոփ տեղեկանքների տեսքով ներկայացվել են ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն:

17. **Նպատակ՝** ծրագրում ընդգրկված պետական գույքի մասնավորեցման գործարքների հետ կապված միջոցառման իրականացում: Նշված **միջոցառման իրականացման արդյունքում** դրամական մուտքերը 2022 թվականին կազմել են՝ 845,281.2 հազար հայկական դրամ, այդ թվում՝ պետական բյուջե՝ 607,020.1 հազար հայկական դրամ, համայնքային բյուջե՝ 238,261.1 հազար հայկական դրամ:

18. **Նպատակ՝** պետական գույքի օտարման գործարքների հետ կապված միջոցառման իրականացում: Նշված **միջոցառման իրականացման նպատակով՝** պետական անշարժ գույքի օտարումից իրականացված մուտքերը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 3,291,977.4 հազար հայկական դրամ, որից՝ պետական բյուջե՝ 2,438,993.7 հազար հայկական դրամ, համայնքային բյուջե՝ 852,983.7 հազար հայկական դրամ:

19. **Նպատակ՝** բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և կացարանով ապահովման ուղղությամբ կոմիտեի կողմից կատարվող պետական սեփականություն համարվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացի միջոցառման իրականացում, որի նպատակն է բնակչության բնակարանային պայմանների բարելավումը և սեփականության իրավունքի հաստատումով սոցիալական և կենցաղային խնդիրների լուծումը: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում նշված **միջոցառման իրականացման նպատակով՝** բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման՝ հանրակացարանային տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացի

ավարտման գործընթացի ուղղությամբ նվիրատվությամբ (անհատույց սեփականաշնորհմամբ) **ընդհանուր թվով տրամադրվել են 38 բնակելի տարածքներ՝ 35 ընտանիքների (72 անձանց), որից՝**

1) ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման պահանջների համաձայն՝ կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին» ՀՀ կառավարության թվով 2 որոշման նախագծերը, որոնցով առաջարկվել է թվով 9 բնակելի տարածքներ սեփականաշնորհել այնտեղ բնակվող 7 ընտանիքների (13 անձանց)։

2) ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման պահանջների համաձայն՝ կոմիտեի կողմից նախապատրաստվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են ՀՀ կառավարության թվով 3 որոշման նախագծեր, որոնցով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 26 բնակելի տարածքներ՝ 25 ընտանիքների (55 անձանց)։

Ց Ա Ն Կ N 1

ՄԱՄՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՈՐԻ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈԽԱՆՑԵԼ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	Գույքի անվանումը	Գտնվելու վայրը	Մակերեսը (քառ. մետր)	Հանրապետա- կան գործադիր մարմնի անվանումը	Ծանոթություն
1	2	3	4	5	6
